

**ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ, ԵՐԳԵՐՈՒՄ
ԵՎ ԱՂՈՌՔՆԵՐՈՒՄ**

Նորահայտ նյութերի հիման վրա

Լիլիթ Սիմոնյան

Հայտնի է, որ հայ ժողովրդի առավելագույն ավագ սերնդի մեջ, մինչև մեր օրերը լայն տարածում ունեն Ս. Սարգսի մասին ավանդազրույցներ: Պահպանվել են նաև զանազան աղոթքներ, երգեր, ասելուկներ, որոնց մեջ այս կամ այն կերպ արծարծվում է Ս. Սարգսի անունը, հրաշալի կերպարը, գործառույթները, սյուժեն: Ես կանդորադառնամ դրանցից սակավ հայտնի, անտիպ կամ հայագիտության մեջ մինչև օրս չդիտարկված սյուժեներին:

Ինչպես այլ հետազոտողներ, այնպես էլ ես վաղուց շեշտել ենք, որ Ս. Սարգսի թեմաները բնորոշ են ոչ միայն հայ, այլև օտար ժողովուրդներին, մասնավորապես՝ վրացիներին, հույներին, քրդերին, զազաններին, ռուսներին, ռումինացիներին: Ուստի և նախքան Ս. Սարգսի մասին հայ բանահյուսության անցնելը, անհրաժեշտ է հստակ ստորաբաժանել հայկական և օտար նյութերը: Բանն այն է, որ հատկապես խառը էթնիկական կազմով բնակչություն ունեցող մի շարք վայրերում ինչպես միջնադարում, այնպես էլ 19-20-րդ դդ. գրանցվել են միանգամայն իրարարմերժ պատմություններ Ս. Սարգսի մասին, որոնք թյուրիմացությունների առիթ են տվել հայագետներին: Ս. Սարգսի մասին օտար նյութի առավել բնութագրական կողմն այն է, որ դրանում մեծ մասամբ առկա են կողմնակի պատմություններ Ս. Սարգսի շան կամ արջի մասին, մինչդեռ բուն հայկական նյութում Սրբի միակ կենդանին նրա ձին է:

Հնարավոր է, որ այս գրույցները կապված են այն բանի հետ, թե ինչպես են օտարազգիները վերաբերվել հայկական վանքերում իսկապես գոյություն ունեցած՝ վարժեցված կենդանիներ պահելու սովորույթին: Վանքապատկան արջեր վարժեցնելու մասին միանգամայն հավաստի տեղեկություններ է հայտնում Գ. Հալաջյանը՝ Պալապանի Սուրեն ավանի Ս. Թորոսի վանքի վերաբերյալ¹, ինչպես հայտնի է, վարժեցված աքաղաղ է պահվել Մոկաց Փութկու Ս.

¹ Գ. Հալաջյան, Դերսիմի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատ. 5, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1973, 290-293:

Գևորգ վանքում¹, Բաշ-կալեի Ս. Բարթուղիմեոսի վանքի վարժեցված գոմեշի մասին գրում է Վ. Տեր-Մինասյանը²: Այս փաստերի լույսի ներքո պետք է ենթադրենք, որ Հոգվոց վանքի կիսաառասպելական արջը³ նույնպես եղել է վանքապատկան վարժեցված գազան: Տեղեկություններ չկան Ս. Սարգսին նվիրված որևէ վանքում այդպիսի կենդանիներ պահելու մասին, բայց քանի որ Ս. Սարգսին ամենատարօրինակ հայոց սուրբն է դիտվել օտարների կողմից, այդ ամբողջ տեղեկատվությունը համադրվել է և առաջացրել են այնպիսի ոչ-հայկական հավատալիքներ, ինչպիսիք են Ս. Սարգսի արջը կամ շունը:

Այս առումով տիպական է 20-րդ դ. ռուս գրող Ալեքսեյ Ռեմիզովի «Սարգսի շուն» պատմվածքը, որը ժողովրդական գրույցի մշակում է: Սկսվում է այն բանից, որ շուկայի մոտակայքի Ս. Սարգիս հայկական եկեղեցուն կից ապրում էր մի շատ խելացի շուն, որին բոլորն ասում էին «Սարգսի շուն»: Նրան բոլորը սիրում էին, պաշտում էին իբրև իմաստունի: Եվ մի օր շունը կորչում է: Որոնում են ու գտնում սպանված: Շատ են տխրում, իսկ հետո որոշում են ամեն տարի նրա հիշատակին պահք պահել: Մի շաբաթ պահք էին պահում և դրսում շիլա դնում Սարգսի շան համար, եթե առավոտյան վրան շան թաթի հետք էր լինում, ուրեմն, Սարգսի շունը հիշել է ու եկել: Մի առ ժամանակ անց, սակայն, առավոտյան շան թաթի հետք այլևս չէին գտնում, երևի, մոռացել էր իրենց Սարգսի շունը: Մի օր զվարճասեր մի երիտասարդ իր ձիուն է մոտ բերում Սարգսի շան շիլային, և ձին իր հետքը թողնում է դռնից մինչև շիլայով սափորը, իսկ գյուղացիները հավատում են և ուրախանում, որ Սարգսի շունը նորից եկել է⁴: Երբ ոմն Վ. Զենզինով այս հեքիաթի վերաբերյալ ասել է Տեր-Պողոսյանին, թե հայկական հեքիաթներն ինչու՞ են բոլորն այսքան հիմար, Ռեմիզովը վրդովվել է և իր նամակներից մեկում շեշտել, որ այս հեքիաթը գեղեցիկ մաքուր հավատքի մասին է և բոլորովին էլ հիմար չէ, հիշեցնելով «քննադատին» նաև «Ոսկե սյունը» հայկական հեքիաթը, որն ինքը նույնպես մշակել է⁵: Ոմն Զենզինովի գնահատականը, սակայն, անարդար է ևս մեկ պատճառով: Թեև Ռեմիզովն այս պատմվածքը հրատարակել է «Հայկական գրույց» ենթավերնագրով, նրա գրառումների մեջ առկա է հետևյալ ցուցմունքը. «Сказывал иеромонах Крестового монастыря (Джварис Сагдари) Иларион. Записал Н. А. Чернявский»⁶: Հետևաբար,

¹ Ե. Լալայեան, Վասպուրական-Հավատք, ԱՀ, գ. XXV, Թիֆլիս, 1914, էջ 45-46 և այլուր:

² Վ. Տեր-Մինասեան, Անգիր դպրութիւն և հին սովորոյթներ, Կ. Պոլիս, 1904, էջ 161:

³ Ե. Լալայեան, նշվ. աշխ., էջ 49:

⁴ А. М. Ремизов, Собрание сочинений в десяти томах, т. 2, М., «Русская книга», 2000, с. 318-319.

⁵ Նույն տեղում, էջ 419:

⁶ Նույն տեղում, էջ 329: Նիկոլայ Չերնյավսկին ռուս և վրաց բանասիրության սիրող-բանահավաք է եղել: Ռեմիզովը նրա և նրա հավաքած նյութերի հետ ծանոթացել է 1912 թ.:

բուն գրույցը գրառվել է ոչ թե հայ, այլ վրացի, այն էլ՝ հոգևորական բանասացից: Ինչպես և կարելի էր սպասել, այն պարունակում է տեղեկություններ ոչ այնքան Ս. Սարգսի իրական պաշտամունքի, որքան դրա՝ վրացական ընկալման մասին: Այս թյուրիմացությունը պարզելը հեշտ էր, քանի որ այն ի հայտ է եկել անցյալ դարում: Պետք է կարծել, որ ավելի վաղ շրջանի թյուրիմացությունները ևս նույն բնույթն են ունեցել:

Համեմատության համար. Բուկովինայի հայերից գրառված տարբերակը միանգամայն համապատասխանում է բուն հայկական նյութին և ավանդազրույցին կից ունի նաև Ս. Սարգսի փոխնդի ու աղի բլիթի արարողությունների և ծիսական երգի հավաստի նկարագրությունը: Ահա այդ երգից մի բեկոր.

Այ դղա, տու սև չուխավոր,

Սաղմոսը ձոցիդ սովոր –

Էրնագ գղամ էն օրը,

Դուն իս գեղաս թաքավոր¹:

Ձի բացառվում նաև, որ Ս. Սարգսի շունը ոչ այլ ինչ է, քան ուղղափառների համար միանգամայն սովորական, բայց որոշակի դարաշրջանում արգելված շնագլուխ սրբի՝ Ս. Խրիստոֆորի (Քրիստափորի²), կերպարը, որը նույնացվել է հայկական սրբի հետ:

Հույների մեջ Ս. Սարգսի հանդեպ բացասական վերաբերմունքը պայմանավորված է ոչ միայն բուն դավանաբանական և ծիսական տարբերությունների, այլև պատմամշակութային որոշակի պատճառներով: Ըստ էության, Ս. Սարգսի կողմից հույն աղջկան փախցնելու սյուժեն համընկնում է հունական դիցաբանությունից հայտնի մեկ այլ առասպելի հետ: Այդ առասպելը լավագույնս հայտնի է Պլատոնի «Ֆեդր» տրամախոսությունից. այստեղ Իլիս գետից ոչ հեռու գտնվող վայրից Բորեասը առևանգում է Օրիթիային, որը հետագայում դառնում է նրա կինը: Իլիս գետի ափին է գտնվել մուսանների և Աքելոյսի սրբ-

1917-ին նա իր նամակում գրել է՝ «Աշուղ Ղարիբ» սիրավեպի իր գրառած մի տարբերակի վերաբերյալ. «Я ошибся, это не вариант, а версия. Как Вы увидите, очень древняя, т. к. в ней приведены остатки татарской песни. Вместо Хадерилиаза (Св. Георгия), как у Лермонтова, здесь Ваш знакомец Сурп Саркис (Св. Саркис)». Նույնը, էջ 420: «Աշուղ Ղարիբի» այնպիսի տարբերակներ, որոնցում գործող անձ է Ս. Սարգիսը, գրառվել են հայ բանասացներից:

¹ H. von Wlislöcki, M^rchen und Sagen der Bukowinaer und Siebenbürgger Armenier, Hamburg, Actien-Gesellschaft, 1891, S. 52.

² «Շանագլուխ Ս. Քրիստափորի» վանք է եղել Բաբերդում: Ըստ ժողովրդական ավանդության, Ս. Քրիստափորը հոգին ավանդել է ոչ հեռու գտնվող Բռնակաձոր վայրում, որտեղից նրա մարմինը բերել և ամփոփել են այնտեղ, ուր ավելի ուշ կառուցվել է վանքը, տե՛ս Կ. Տէր-Խաչատուրեան, ճամբորդություն գաւառաց մէջ// «Բիւզանդիոն» N 691, Կ. Պոլիս, 1899, էջ 1:

բավայրը, իսկ դրանից մեկ-երկու սթադիում ստորև՝ Բորեասի սրբավայրը¹: Հույներն ավանդաբար կամ քրիստոնեության ազդեցությամբ սովոր էին բացասաբար վերաբերվել Հյուսիսային քամուն, Բորեասին, իսկ հայերի կողմից նրա զուգահեռը հանդիսացող Ս. Սարգսի պաշտամունքը խորթ էր նրանց համար, իբրև թե մի կողմից բացարձակացնում էր հեթանոսական արժեքներ, մյուս կողմից՝ նսեմացնում էր հույների հնամենի ավանդույթը: Այս վերաբերմունքը Սրբի հանդեպ փոխառել էին նաև վրացիները:

Ս. Սարգսին նվիրված բուն հայկական բանահյուսությունը հարուստ է և միանգամայն բազմազան: Պետք է նշել, որ Սրբի կերպարը բավականին միատարր է, այսինքն, անկախ այն բանից, տվյալ սյուժեում շեշտվում է նրա ձիավոր և գինավառ լինելը թե ոչ, նա միշտ օժտված է միևնույն հատկություններով, բնույթով և գործառույթներով: Այդուհանդերձ պետք է նշել հատկությունների մի քանի կարևոր խումբ, որոնք ստորաբաժանվում են հակադիր նշանակությունների միջև դասավորված սանդղակի մեջ ըստ՝ հետևյալ պարամետրերի. ա. անմահ-մահկանացու, բ. պատժող-ազատող:

Որպես տարվա առավել ցուրտ շրջանի (հունվար-փետրվար) հովանավոր Ս. Սարգիսը պահպանել է համապատասխան նախաքրիստոնեական աստվածության հատկանիշներ, և պատահական չէ, որ Մ. Աբեղյանը նրան համարում է հողմի մարմնավորում², իսկ Ա. Ահարոնյանը նրան անվանում է Մրրիկի սուրբ³: Ս. Սարգսի բնորոշ հատկությունն է արագահասությունը, քամի և մրրիկ առաջացնելը:

Ս. Սարգսի մասին առավել տարածված և լավ պահպանված սյուժեն, անշուշտ, հույն աղջկան փախցնելու պատմությունն է, որը հայտնի է պատմական Հայաստանի գրեթե ամբողջ տարածքում: Հատկանշական է, որ այս սյուժեների մեջ ամենից լավ են երևում անմահ-մահկանացու հակադիր հատկությունների միջև ընկած տարբերակները: Մասնավորապես, այն տարբերակները, որոնցում Սրբի հետագա մահվան մասին ոչինչ ասված չէ և ասես թե ենթադրվում է, որ նա անմահ է, ընդգծված հեքիաթային: Այսպիսի հեքիաթային բնույթ ունի Բարխուդար Ղազիյանի՝ Թիֆլիսում գրառած տարբերակը⁴, որն սկսում է այն բանից, որ ինչ-որ պատերազմի համար հույները հայերից պահանջում են քա-

¹ Платон, Федр, 229с-d, 230b//Собр. соч. в 4-х томах. Том 2. М.: «Мысль», 1993, с. 165-166: Հմմ. Հերոդոտի՝ Her. VII, 189, համաձայն, որի Բորեասը համարվում էր հույների փեսան և նրան էին դիմում հակառակորդի նավերը խորտակելու համար, և Պավսանիասի՝ Paus., I, 19.6, վկայությունների հետ:

² Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Է, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 78-79:

³ Ա. Ահարոնյան, Մրրիկի սուրբը, Թիֆլիս, 1903:

⁴ ՀԱԻ արխիվ, Բ. Ղազիյանի ֆ., թղթ. 3, թ. 11-15բ, գրառված է Թիֆլիսում:

ռասուն հազար զինվոր, մինչդեռ հայերն ուղարկում են Սարգսի քառասուն հոգուց բաղկացած ջոկատը: Քառասուն հազարանոց զորքի դեմ կռվելուց և հաղթանակած վերադառնալուց հետո հայոց քաջերը մտավախություն են առաջացնում հույների մեջ, որ կտրիճները իրենց էլ կարող են «սաղ-սաղ թաղել»: Միաժամանակ հույները որոշում են ցեղական ցլերի պես օգտագործել նրանց, որ իրենց կանայք որակյալ սերունդ տան և միայն դրանից հետո ոչնչացնել նրանց: Ս. Սարգսին և նրա ջոկատին առաջարկվում է գիշեր անցկացնել գեղեցիկ աղջիկների հետ, որոնց հրահանգված է կեսգիշերից հետո կտրել երիտասարդների կոկորդները: Աղջիկները ենթարկվում են հրահանգին, և միայն Ս. Սարգսի զույգն է հակառակվում, արթնացնում է հերոսին, և նրանք փախչում են: Հույները հետապնդում են նրանց, և աղջիկը հերթով նետում է սանրը և հայելին: Սանրից անտառ է գոյանում, հայելուց՝ ծով: սակայն հունաց զորքն անցնում է դրանց միջով: Այդ ժամանակ Սարգսը կարգադրում է աղջկան փոխինդ փչել հույների վրա: Այդ փոխինդից բուք ու բորան է առաջ գալիս, որի մեջ խեղդվում է ամբողջ զորքը, իսկ Սարգսին ու աղջիկը բարեհաջող հասնում են Էրզրում, այնտեղից էլ՝ Հայաստան: Այս պատումն ավարտվում է բացատրական հավատարիքով՝ ահա թե ինչու Ս. Սարգսի հինգ օրերից մեկում անպայման «թիփի» է լինում:

Իմ գրառած՝ Լուսագյուղի տարբերակում սյուժեի ընդհանուր նույնությամբ՝ փոխինդը չի հիշատակվում, այլ ուղղակիորեն Ս. Սարգսի ձին այնպես է սուրում, որ հզոր քամի է առաջացնում, որը թույլ չի տալիս հետապնդողներին հասնել իրեն¹:

Ինձ մինչև օրս չի հաջողվել գտնել ժողովրդական գեթ մեկ տարբերակ, որի մեջ Ս. Սարգսը նահատակվեր՝ Շապուհի կամ այլ թագավորի ձեռքով: Ընդհակառակը, պահպանվել են այնպիսի տարբերակներ, որոնցում Սուրբը զոհվում է պատերազմում² և կամ մահանում է բնական մահով:

Վերջին դեպքում, թեև Սուրբը հանդես է գալիս իբրև մահկանացու, սյուժեն կարող է լինել միանգամայն հեքիաթային կամ նույնիսկ վիպական: Այսպես, Վանա տարբերակն առավել վիպականացված պատումն է³ այն իմաստով, որ Ս. Սարգսի կյանքի հետ կապված բոլոր իրադարձություններն առնչվում են իրական տեղավայրերի և պատմական անձանց հետ: Այստեղ Սարգսի ջոկատը

¹ Լիլիթ Սիմոնյանի ԴՆ, Ապարան, 2011, գ. Լուսագյուղ, բանասաց՝ Աղաբեկ Գևորգյան:

² Ե. Լալայեան, Բորչալուի գաւառ, ԱՀ, X, Թիֆլիս, 1903, էջ 256-257: Նույնիսկ այս դեպքում Ս. Սարգսը ոչ թե պարգապես զոհվում է, այլ «լիս էր՝ լիս դառավ», նույնը, էջ 257:

³ Պոլտ Զաթաթի Քաբուն ու քաջ Սարգսը, բանահավաք՝ Աբրահամ Աբրահամյան, ՀԱԱ, ֆ. 1336, ցուցակ 7, գործ 954, թ. 51-67 (025192-025197):

հանդես է գալիս հռոմեացիների կողմից, որոնք փորձում են գրավել Պոլիսը՝ օգտվելով այդ օրը նշվող հունական տոնից: Հունաց թագավորի խորհրդական Թոթորիին (դժվար չէ ճանաչել Թեոդորոս անունը) հաջողվում է համոզել կտրիճներին: Հետևում է քառասուն աղջիկների և մահափորձի միևնույն սյուժեն այն տարբերությամբ, որ աղջիկները պետք է հատուկ պայթուցիկ նյութով խլացնեն ու հետո խեղդեն երիտասարդներին: Սարգիսը փախչում է իր զույգի հետ, ճանապարհին գուրզով փլում է Պոլսի յոթ մետր բարձրությամբ պարսպի մի մասը - այստեղից Չաթլաթի Քաբու անունը - և ելնում է Մարմար ծովի մոտ, ջուրը ճեղքելով գնում է և մինչև լույսը բացվելը հասնում է Սամսոն քաղաքին: Այստեղ կապած է «կարմիր ճիվանի» երաշխք, որի վրա տեղափոխվելով շարունակում է ճանապարհը դեպի Արճեշի սահմանը: Ճանապարհին մի մեծ քարե ժայռ է հանդիպում, որը նա մի հարվածով ճեղքում է և անցնում, բայց այդտեղ, Ոսկե ձոր կոչված վայրում, ձիու ոտքը մխրձվում է ցեխի մեջ, և այդ հետքը մնում է մինչև հիմա: Վերջապես հասնում է Թիմար գավառին, և երբ կայծակի նման լույս տալով գալիս է, հոտաղները վախից ցաքուցրիվ են լինում, մինչև որ աղջիկը ասում է: «Մի՛ վախնաք, Սուրբ Սարգիսն է»: Վերջապես հասնում է Խառակոնիս գյուղին, որտեղ իր հին ու նոր հերոսությունների համար արժանանում է պաշտամունքի: Այստեղ նա հասարակ ձեռնադրումով բուժում է ամեն տեսակի հիվանդների: Սակայն երջանկությունը երկար չի տևում, և նրա սիրեցյալը խեղդվում է Արճակի լճում: Աղջկա գերեզմանը համարվել է սուրբ և կոչվել է Սուրբ Սոֆիայի գերեզման: Դեպքից հետո Սարգիսը ծանր հիվանդանում է և ոչ ոքի չի հաջողվում բուժել նրան: Մի գիշեր գյուղի ժամկոչը կոչնակը խփելիս նկատում է, որ այն տան երդիկից, որտեղ պառկած է Սարգիսը, կանաչ-կարմիր լույս է ելնում ու իջնում: Հասնելով իմանում են, որ Սարգիսը մահացել է: Նրա գերեզմանը և վրան հետագայում կառուցված մատուռը դառնում է սրբավայր, որին այցելում են «դողցվոր» հիվանդները՝ բուժման նպատակով:

Գուրգեն Ստեփանյանի՝ Սևանի տարբերակում օտարազգի աղջիկ փախցրնելու միևնույն մոտիվը կապվում է հրեաների «խախամի» - կագանի - աղջկա հետ: Հրեաները ցանկանում են կոտորել բոլոր նեղյալներին օգնության հասնող գինվոր Սարգսի ջոկատը, որովհետև նրանք սիրահարվել էին հրեա աղջիկների: Փախուստի ճանապարհին բուք է բարձրանում, որի մեջ գոհվում են և՛ Ս. Սարգսի մարդիկ, և՛ հրեա հետապնդողները: Այս միջադեպը բացատրում է փետրվարի սկզբի Սուրբ Սարգսի բուքը¹, սակայն չի կապում իրադարձությունը

¹ Սուրբ Սարգիս (Խղըր Նաբի), ՀԱԻ արխիվ, Գ. Ստեփանյանի ֆ., թղթ. 2, թ. 393-394:

փոխնդի կամ Ս. Սարգսի տոնի հետ: Այստեղ որևէ հրաշքով չի բացատրվում նաև բքի առաջացումը, այդուհանդերձ մոտիվը, որը վկայում է Սրբի երբեմնի հողմեղեն բնությունը, պահպանվում է:

Նույն բանահավաքի հաղորդած մեկ այլ տարբերակում Սարգիսը ոչ թե նեղյալների պաշտպանն է, այլ Անդրանիկի պես քաջ և Քյոռ-Օղլու պես ավագակ մի անձնավորություն, որը գնում է հրեաների երկիրը թալանի: Այստեղ հրեա աղջիկները գիշերը սպանում են Սարգսի քառասուն զինվորներին, և միայն Սառան՝ խաբանի աղջիկը արթնացնում է Սարգսին և առաջարկում փախչել միասին¹: Միևնույն բանահավաքի հաղորդած երրորդ տարբերակում Սարգիսն ու իր հարսնացուն հասնում են Սևանի Ծաղկունք գյուղի մոտ և սարը բարձրանալուց առաջ որոշում են հագստանալ մի բլրի վրա և տեսնել՝ դեռևս հետևում են արդյոք իրենց հրեաները: Քանի որ ձմեռ էր, մութ է ընկնում, և նրանք գիշերելու համար մի քոլիկ են շինում: Բուքն անցնում է, իսկ թշնամիները չեն երևում: «Թող այս վայրում ծաղկունք բուսնեն», ասում է Սարգիսը: Դրանից հետո այդ գյուղը կոչվում է Ծաղկունք, իսկ բլուրի վրայի իջևանատեղիում կառուցվում է Ս. Սարգիս մատուռը: Ամեն շաբաթ և կիրակի մինչև ուշ աշուն այստեղ ուխտի են գալիս: Սրբավայրը համարվում է ընկնավորներին բուժող²: 2006 թ. Աղաջանյան եղբայրների բարեգործության շնորհիվ մատուռը վերակառուցվել է, իսկ դրանից ոչ հեռու կառուցվել է նաև Ս. Սարգիս եկեղեցին (ճարտարապետ՝ Վ. Թադևոսյան)³:

Երգերում և աղոթքներում Ս. Սարգսի որպես բքաբեր տարերային տիրակալի կերպարը չի արծարծվում: Ընդհակառակը, առանձին կարևորություն է ստանում նրա՝ ամենուրեք մտնելու, ցանկացած դուռ բացելու և, հետևաբար՝ թաքնված իրեր գտնելու և բանտարկյալներին ազատելու ընդունակությունը: Պատահական չէ, որ իր պահելու «Ալնիս-բալնիս» խաղի մեջ պահված առարկան գտնելու համար երեխաները դիմում են հենց Ս. Սարգսին.

Ալնիս-բալնիս,

հավատամ Ս. Սարգիս,

Խիլ խան, տուր գիս⁴:

Իր նախնական իմաստով այս ընդունակությունը ևս կապված է քամու տիրակալ լինելու հետ: Այսպես, Աստղիկ Նազարյանի գրառած «Սև ղոչը գցեց սիպտակին, սիպտակն էլ՝ կարմրին» հեքիաթում Ս. Սարգիսը քամու, հետո՝

¹ Գ. Ստեփանյան, Սևանի ազգագրական նյութեր//ՀԱԻ ԱԲԱ, թղթ. 125, գ. 261, թ. 27-29:

² Գ. Ստեփանյան, Սևանի ազգագրական նյութեր//ՀԱԻ ԱԲԱ, թղթ. 125, գ. 263, թ. 11-12:

³ <http://tsaghkunj.blogspot.com/>

⁴ Վ. Բոդյան, Հայ ժողովրդական խաղեր, հատ. III, Եր., 1983, էջ 34:

ձիավորի կերպարանքով հայտնվում է խոր փոսում կալանված հերոսին և օգնում է նրան դուրս գալ¹:

Ամեն տեղ մտնող, բանտարկվածներին փրկող Ս. Սարգսին ենք գտնում նաև Գևորգ Շերենցի գրառած Վանա ժողովրդական հայրենի մեջ.

Ձիկ տարան էս գնդան թալիցին,
 Զընդընի դոները վերէս փակիցին.
 Պանլիս էս ծկան պերան թալիցին,
 Անատակ ծովեր խասուցին:
 Շատ քեռր ախպեր ունի,
 Մէջ չիրե գէյրուս էրէվան.
 Շատ սրբեր ժողվան էկան,
 Սուրբ Սարգիյս իրե ձիկ իխան²:

Հենց երգերում և աղոթքներում է, որ հաճախ հանդես է գալիս բանալիի մոտիվը, այս վերջին դեպքում՝ հեքիաթային բանաձևի համաձայն, այն նետում են ձկան բերանը ի պահ: Ի տարբերություն երգերի, աղոթքներում սիրո հովանավոր լինելն այդքան արտահայտված չէ, որքան ծանր ծննդաբերող կնոջը օգնելու, խորհրդանշական լեզվով «բարձին բանլիս թալելու» կամ գոտեպնդելու մոտիվը, բառացիորեն՝ «բռնէ գոտիս»:

Հեքիաթային մանրամասներով մի սյուժե եմ գրանցել Ապարանում³, որը, չնայած իր արխարիզմին, ավելի շուտ կապվում է ոչ թե բքաբեր կամ հերոս, այլ սիրո հովանավոր սրբի կերպարի հետ: Պատումը բացատրում է, թե ինչպես է առաջացել սերը ամուսինների միջև և ինչու է Ս. Սարգիսը սիրո և ամուսնությունից հովանավորը: Այն գյուղում, ուր ապրում էին Սարգիսն ու իր կինը շատ խիստ բարբեր են տիրել, կանայք տառապել են անիրավությունից և տղամարդկանց անպատժելիությունից: Մի օր ժողով են անում ու որոշում միևնույն պահին սպանել գյուղի բոլոր տղամարդկանց: Այն կանանց, որոնք կհայտնեն ամուսիններին այդ մտադրության մասին, նույնպես որոշվում է սպանել: Պայմանավորված գիշերով բոլորն իրագործում են ոճիրը, բացի Սարգսի կնոջից, որը հայտնում է իր ամուսնուն գաղտնիքը և առաջարկում է փախչել: Ս. Սարսին երազ է գալիս - Աստված խոստանում է օգնել, եթե նա իր հետ վերցնի դանակ, սանր և օճառ: Նրանք ճանապարհ են ելնում լուսամուկին և անցնում են ամայի

¹ Ա. Նազարյանի ֆ., թղթ. 2, թ. 416:

² Գ. Շերենց, Վանայ սագ, Առաջին մաս, Թիֆլիս, 1885, էջ 51:

³ Լ. Սիմոնյան, ԴՆ, Ապարան, 2011, բանասաց՝ Մարիամ Պարույրյան:

դաշտով: Լուսաբացին, երբ ամեն ինչ պարզվում է, գյուղի կանայք ձիեր են հեծնում և հետապնդում փախստականներին: Սարգիսը սկզբում նետում է դանակը, և դաշտը պատվում է սրերով: Երբ հետապնդողներն անցնում են այդ պատնեշը, նետում է սանրը, և դաշտը պատվում է չիչխանի խիտ թփերով: Վերջապես նետում է օճառը, մի մեծ ճահիճ է գոյանում, որի մեջ հետապնդողները խեղդվում են:

Բոլորովին այլ սյուժե, բայց նման իմաստ ունի հունգարահայերի տարբերակը, որը հրատարակվել է Հայնրիխ ֆոն Վլիսլոկիի կողմից: Այստեղ Սուրբը ի սկզբանե կոչվում է Տիրոջ կողմից և ընդունակություն ստանում բարեպաշտ և բարոյական աղջիկներին լավ ամուսիններ շնորհելու ընդունակությամբ: Միայն մեկ անգամ Ս. Սարգիսը խղճում է մեղք գործած մի կնոջ և խնդրում է նաև նրա համար: Երբ Սրբի երկրային ուղին ավարտվում է, Աստված չի ընդունում նրան՝ մեղք գործած կնոջն օգնելու համար պատիժ նշանակելով - ևս հիսուն տարի անցկացնել երկրի վրա, մարդկանց ծառայելով: Այստեղ միայն ի հայտ է գալիս Ս. Սարգսի՝ զորականի և իմաստունի կերպարը: Հպարտ Սուրբը պայման է կապում թագավորի հետ՝ ինքը ոչ ոքի առաջ գլխարկ չի հանելու, երբեք չի թքելու և երբեք չի ծիծաղելու: Երբ Ս. Սարգիսը գլխարկ է հանում Աստծուն հայհոյողների առջև, թքում է թագուհու ներկայությամբ և ծիծաղում է, երբ արքան ցանկանում է տասը տարվա դիմացկունություն ունեցող վերարկու գնել, թագավորը հանկարծամահ է լինում¹: Ինչպես տեսնում ենք, Վլիսլոկիի տարբերակում վերջնականապես խզվում է կապը Ս. Սարգսի և քամու միջև, բացակայում է հետապնդման դասական սյուժեն և փախցնելու-ազատագրելու մոտիվը, մնում է միայն կույսերին հովանավորելու, նրանց լավ փեսացու ապահովելու գործառույթը:

Այս երևույթը, համադրվելով համահայկական, միանման պաշտամունքի ձևի հետ, ենթադրել է տալիս, որ սյուժեների որոշ մասը ունեն համեմատաբար ուշ ծագում և բացատրական բնույթ: Որքանով է կարելի խոսել այս դեպքում կերպարի էվոլյուցիայի, իսկ որքանով մոռացված սյուժեները նորաստեղծներով փոխարինելու մասին, դեռևս կարիք ունի ուսումնասիրության: Փաստն այն է, որ Ս. Սարգսի պաշտամունքը միշտ կրել է ժողովրդական-քրիստոնեական բնույթ և այսօր էլ կենդանի է ինչպես ծիսական դրսևորումներով, այնպես էլ ավանդազրույցների և բանահյուսական այլ ժանրերի ձևով:

¹ H. von Wlislöcki, նշվ. աշխ., S. 52-54.

**ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԱՎԱՆՂԱԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ, ԵՐԳԵՐՈՒՄ
ԵՎ ԱՂՈԹՔՆԵՐՈՒՄ
Նորահայտ նյութերի հիման վրա**

Լիլիթ Սիմոնյան

Բանալի բառեր՝ Ս. Սարգիս, ավանդազրույց, նախաքրիստոնեական, եկեղեցի, Բուկովինայի հայեր:

Հայ ժողովրդական քրիստոնեության սիրված սուրբը Մ. Աբեղյանի սահմանումով և Ա. Ահարոնյանի գեղարվեստական բնութագրմամբ ծմռան բքի քրիստոնեացված մարմնավորումն է: Ս. Սարգսի տոնը համընկնում է առավել ճյունառատ շրջանի հետ, և ավանդազրույցների մեծ մասում ընդգծվում է իր թշնամիներին ու հետապնդողներին բուք ու բորանի օգնությամբ հաղթելու նրա կարողությունը: Առասպելաբանությունը, որի հիմնական սյուժեն թշնամի երկրի (մեծ մասամբ՝ հույների) արքայադստերը առևանգելն է, մատնանշում է հայ սրբի մասին պատումների նմանությունը Պլատոնի և Հերոդոտի գործերում պահպանված Բորեասի մասին առասպելի հետ, որը նույնպես առևանգում է Օրիթիա անունով հույն աղջկան և համարվում է «հույների փեսա»: Ս. Սարգսին նվիրված ավանդապատումներն ու երգերը գրառվել են ոչ միայն հայ, այլև ռուս (մշակել է Ա. Ռեմիզովը), հունգարացի (հրատարակել է Հ. Վլիսլոքին) և այլ բանահավաքների կողմից: Կապված առանձին պաշտամունքավայրերի հետ (Գեղարքունիքի Ծաղկունք գյուղ) կամ հավատալիքի, տոնի, սովորույթի առաջացումը բացատրող՝ Ս. Սարգսին նվիրված ավանդազրույցները մինչև օրս տարածված են Հայաստանի տարբեր մասերում:

**ОБРАЗ СВЯТОГО САРКИСА В АРМЯНСКИХ НАРОДНЫХ ПРЕДАНИЯХ, ПЕСНЯХ И
МОЛИТВАХ-ЗАГОВОРАХ**

на основе новоявленных материалов

Лилит Симонян

Ключевые слова: Св. Саркис, предания, дохристианство, церковь, армяне Буковины

Излюбленный святой армянского народного христианства по определению М. Абеяна и по образной характеристике А. Агароняна – это христианизированное воплощение зимней вьюги. Праздник Св. Саркиса совпадает с наиболее снежным периодом, и в большинстве преданий подчеркивается его способность побеждать своих врагов и преследователей с помощью метели или снежной бури. Мифология, центральным сюжетом которой является похищение вражеской (по большей части - греческой) принцессы указывает на родственность сюжетов об армянском святом с мифом о Боре, похитившем гречанку Орифию и считавшимся “зятем греков”, сохранившимся у Платона и Геродота.

Предания и песни, посвященные Св. Саркису записаны не только армянскими собирателями, но и русскими (обработаны А. Ремизовым), венгерскими (опублико-

ваны Г. Влислоки) и др. Связанные с конкретными святилищами (в с. Цахкунк) или объясняющие возникновение обычаев, поверий и праздника, предания о святом продолжают бытовать в народе и распространены по всей территории Армении.

**SAINT SARGIS IN ARMENIAN FOLK TALES, SONGS AND CHARM-PRAYERS
based on newly found materials**

Lilit Simonyan

Keywords: *Saint Sargis, tales, prechristianity, church, armenians of Bookovine*

The beloved saint of the Armenian folk Christianity according to M. Abeghian and A. Aharonian is a christianized embodiment of the winter whirlwind. The festival of St. Sarkis coincides with the most snowy period of the year and in most narrations his capacity to defeat his enemies through whirlwind or snow tempest is underlined. The mythology, the central subject of which is kidnapping of the princess of fiends (typically Greeks) points at alliance between Armenian stories about St. Sarkis and the myth of Boreas who captured the Greek maid Orithia and got the title of “son-in-law of the Greeks”, preserved in works of Plato and Herodotus. Tales and songs about St. Sarkis are picked by not only Armenian, but also Russian (elaborated by A. Remizoff), Hungarian (published by H. von Wlislocki) folklorists. Connected with actual shrines (Tsakhkunq) or explaining origins of some customs, beliefs, or of the festival, folk tales about the saint still exist in the living tradition and are distributed all over Armenia.